

Քիւ 26077  
Նոյեմբեր 10, 1978

Մեծայարգ  
Տիար Սուրէն Էվրան  
Ատենապետ Եկեղեցւոյ Եինութեան Յանձնախումբի  
Թորոնթոյի մէջ կազմուելիք Երկրորդ Ծուխին  
Թորոնթօ.

Յարգելի Տիար Էրվան,

Թորոնթոյի մէջ երկրորդ ծուխ մը կազմելու համար սկսուած աշխատանքը աւելի եւս արդիւնաւորելու համար մեր հետեւեալ որոշումները կը յանձնենք ձեր ուշադրութեան, ի գործադրութիւն.

1. Ձեր ատենապետութեամբ գործող յանձնախումբի հինգ անդամներուն թիւը կը թարձրացնենք տասնըմէկի, ըստ ներքեւ տրուած ցանկին:

2. Այս Յանձնախումբին անունը գլխի ըլլալ Սքարպօրոյի Հայց-Եկեղեցւոյ Եինութեան Յանձնախումբ:

3. Այս Յանձնախումբի պարտականութիւնն է ձեր ատենապետութեամբ ֆնտել եւ զանել յարմար վայրը եւ կալուած մը Սքարպօրոյի շրջանակին մէջ, Սքարպօրոյի Հայց. Առաքելական Եկեղեցիի անունով հաստուելիք մեր համայնքին համար:

4. Այս Յանձնախումբին պարտականութիւնն է կազմակերպել նուիրահաւաքութեան գործը, ապահովելու համար անհրաժեշտ նիւթականք, եւ հոգալու համար գնուելիք կալուածին եւ Եկեղեցւոյ շինութեան ծախքերը:

5. Այս Յանձնախումբին պարտականութիւնն է օրինական միջոցներով արձանագրել աւլ, ինքօրփօրէյթ ընել, վեր երկրորդ համայնքը իրել Սքարպօրոյի Հայց. Առաքելական Եկեղեցի, մինչեւ նոր Եկեղեցւոյ օծումը եւ անուանակոչումը:

6. Յնոր անօրինութիւն, այս Յանձնախումբին նախագահ կը նշանակենք Առաջնորդի Օրինորդ Հիգշ. Տ. Յուսիկ Ե. Վրդ. Պաղտասեանը, որուն հետ թղթակցութեան մէջ պարտիի զանուիլ: Օրինորդ Հայր Աուրբին պէտք է ղրկուին Յանձնախումբիդ արձանագրութիւններու եւ թղթակցութեանց օրինակները, եւ իր ստորագրութիւնը պէտք է կրեն Առաջնորդին, Քեմական Խորհուրդին ուղղուած եւ այլ պաշտօնական գրութիւնները եւ յայտարարութիւնները:

Կը մաղթենք որ Աստուծոյ օրհնութիւնը անպակաս մնայ ձեր եւ Յանձնախումբիդ բոլոր անդամներուն վրայ:

Սիրոյ ողջունիւ

ԹՐՐԳՈՄ ԱՐԸՆԳԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ

Աուրէն Էրվան	Ատենապետ
Տոբթ. Վարդան Այնաճեան	Օրի Ատենապետ
Արմէն Քիւրքճեան	Ատենաղպիր
Տոբթ. Վաչէ Էերամեթլեան	Օրի Ատենաղպիր
Խաչիկ Գուլումճեան	Գանձապահ
Ղեւոնդ Շահ Մելիքեան	Օրի Գանձապահ
Ժիրայր Թորիկեան	Խորհրդական
Շիրեմ Իսիանպուլ	Խորհրդական
Նղիս Թորոսեան	Խորհրդական
Արթին Գաւուր	Խորհրդական
Գրիգոր Մազմանեան	Խորհրդական

Օրինակ՝ Ա. Երրորդութիւն Եկեղեցւոյ Երեւան Խորհուրդին